Չեոքի տակից չեմ գալըս գալ. Դու ինձ միշտ ուղիղ ճանապարհով կտանես։ Ի՛նչ ճանապարհներով ես կամենում՝ որ ես մեն գամ. գիտեմ, ձմ ցերեկըցըն Բարութիւնդ, որ ամենը և ինձ դէպի երջանկութիւն պէտք տանեն։ Դու այս աշխարհս այնպէս գեղեցիկ ու գրաւիչ կերպով ես զարդարել, որ մեք նորա մէջ Քո բարութիւնն ենք տեսնում ու ճանաչում։ Ուրեմն աշխարհս շատ անգամ մեզ համար փշալից ճանապարհներ պէտք ունենայ, որ բոլորովին նորան անձնատուր չլինէինք. պէտք է սաստն կերպով մեզ երանից յետ մղի, հեռացնի, պէտք է սիրտներս նրանից կտրի, որ մտքներս բռնենք՝ որ ոչ թէ երան, այլ մի ուրիշ բարձր աշխարհի ու կեանքի ենք պատկանում։ Դու ես առաջնորդում ինձ իմ ճանապարհներիս մէջ Քո խորհրդովն ու վերջը փառքով ինձ ընդունում։—Ո՞վ ունիմ ես երկնքումը, երկրիս վերայ ես Քեզանից զատ ուրիշին չեմ ուզում.—Թէ որ իմ մարմինս ու հոգիս ես մաշի. բայց և այնպէս, Աստուած իմ, իմ սրտիս զօրութիւնն ու իմ բաժինս Դու ես յաւիտեան։

Գէր. Եղ. Աղ.

## ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ ՔԱՂՈՒԱԾ ԽՆԴԻՐՆԵՐ.

(Աւգուստ 1880 թուականից)։

Ուսուցման առարկաների բաշխման հետազօտութեան համար երկու կարեւոր կողմ ունի,—առաջին՝ վերաբերութեամբ այն ներքին կապի որ ունին առարկաները միմեանց հետ. և երկրորդը՝ ուսուցման վերաբերութեամբ։

Առաջին դէպքում այս խնդրին ենք հանդիպում թէ՝ ո՞րն է արդեօք աւելի լաւ.—համաժամանակեայ պատած դրութի՞ւնը թէ յաջորդականը. Այսինքն՝ խօսքով ասենք. ո՞րն է լաւ արդեօք. ուսուցման բոլոր առարկաները մի և նոյն ժամանակ ուսուցանել, դասաւորելով նոցա ծաւալը աստիճանաբար ընդարձակուող շրջանակների մէջ, որոց կենտրոնը ընդհանուր է. թէ՝ նախ մի քանի առարկաներ ուսուցանել միասին (զուգընթացաբար) և յետոյ սկսել մի այլ առարկայ. ու այսպէս շարունակել՝ աւելացնելով միշտ մի նոր առարկայ, զկնի որոշեալ ժամանակամիջոցի։

Թէպէտ և այս խնդիրը մանկավարժական ամենակարեւոր խնդիրներից մէկն է և առանձին ուշադրութեան արժանի. սակայն այստեղ դորա մանրամասն բացատրութեանց մէջ մտնելն աւելորդ համարելով, այսքանը միայն կասենք. տարրական դպրոցներում (3—4 տարվայ ընթացքով) համաժամանակեան դրութիւնն է աւելի օգտաւէտ համարւում. իսկ դպրոցի աւելի զարգացած աստիճաններում՝ յաջորդականը։

Ուրեմն տեսնում ենք որ տարրական կամ ծխական դպրոցներում ուսուցման առարկաների բաշխումն համաժամանակեան է. իսկ ծխականներից բարձր դպրոցներում՝ յաջորդական։

Ուսուցչաց վերաբերութեամբ առարկաների բաշխումն կամ դասատուութիւնը կանոնաւոր է լինում այլ և այլ գիմնազիաներում. Նորագոյն գիմնազիաներում ընդունուած է և ամենօգտակարն է համարւում, եթէ մի ամբողջ դասատան բոլոր առարկաները կամ գոնէ գլխաւոր առարկաները մի ուսուցչի են յանձնւում: Այդ ուսուցիչը տարից տարի անցնում է իւր աշակերտաց հետ մի դասատանից միւս դասատունը, մինչեւ աւարտելուց դէպի բարձրը. Այդպիսով ամենաբարձրին պաշտօնը հասնելով կրկին վերադառնում այն դասատունը, որի մէջ նա սկսել էր —կէսը ուսուցանել իւր աշակերտաց. Այդ աշակերտները 3. 4 կամ 5 տարի միևնոյն մի և նոյն ուսուցչի ձեռքի տակ. Ուսուցիչն ունի ժամանակ ուրեմն բաւականին մօտիկ և լաւ ճանաչելու իւր աշակերտներին. բաւականին միջոց ունի խմտառութ բնական նոցա ընդունակութիւնները և ձգտումները. Պարզ է, որ դասատուութիւնը աշակերտի անձնականութեան պահանջմանցնելու համար՝ չկայ մի այլ յարմարագոյն միջոց. քան թէ նոյն անձնաւորութեան ձգտումների ճանաչողութիւնը, ճանաչելով աշակերտի ձգտումները և ընդունակութիւնները մի՝ մարդկային չկայ՝ որ ունի գիտելին կերպով կարելի է հասցնել նորան նախապէս նպատակին — ընդունակութեան.

Մանկավարժ ուսուցչի գիտակցութիւնն էլ կարելի է չափել այդ գիտակցական ճանաչողութիւնովը. դասատան բոլոր առարկաները կարելի է յանձնել միայն այդպիսի ճանաչողական ընդունակութեան տէր ուսուցչին և ոչ թէ այնպիսիներին, որք թէ և ուանդելի առարկաների քաջահմուտ են լինին. այնու ամենայնիւ աշակերտի բնութիւնը հետազօտելու ընդունակութիւնից զուրկ լինելով՝ անկարող են լինում խրախուսել վերոյիշեալ պահանջը.

Որը որ այդպիսի հմուտ դասախօսներ չկան. այն ժամ լաւ է առարկաների դասատուութիւնը յանձնել այլ և այլ ուսուցիչների, իրանց ընդունակութեան համաձայն բաշխելով.

Ուսուցման ժամերի դասացուցակ կազմելն էլ այնքան դիւրին չէ. ինչպէս կը կարծէին մանկավարժութեան անհմուտ ուսուցիչները. Դասացուցակի կազմելուց կախուած է մանկավարժական էական արդիւնքներից մէկը. Խնդիրն այն է, թէ արդեօք որ կողմից պէտք է ինկատի առնուի այն համապատասխանութիւնը, որ ունին դասաւանդելի առարկաները միմեանց հետ ունեցած յարաբերութիւնով. ուրիշ խօսքով ասենք. ի՞նչ կէտից պէտք է նայիլ, որ իւրաքանչիւր առարկայ դասացուցակի մէջ իւր պատշաճաւոր տեղը գտնի. Մի այլ կողմից խնդիրը այսպէս է. թէ արդեօք ինչ մանկավարժական կանոն պէտք է առաջնորդէր մեզ, որպէս զի կարողանայինք դասաւորել առարկաները այնպէս, որ դարձողութիւնների մէջ ձանձրութիւն չը ծնի. այլ յարմար փոփոխութիւններ մէջ բերելով, կարելին չափ կազդուրէինք աշակերտի յոգնած ու թմրած զօրութիւնը.

Այս խնդիրների լուծումն հարկաւոր էր թողուլ ուսուցիչների նախաձեռնութեանը. նոքա պէտք է աշակերտների դարգացման ուժը, նոցա նախա-

պատրաստուածութիւնը և նոցա խմբերի որքանութիւնը ի նկատի առնելով. լուծէին այդ առաջարկեալ խնդիրները. Մենք յիշեցինք այս պահանջները այն պատճառաւ միայն, որպէս զի իւրաքանչիւր ուսուցիչ ուշադրութիւն դարձնի դոցա վերայ. որովհետև արդի մանկավարժութեան մէջ այդ խնդիրները ևս էական են համարւում. Դեռ ևս մեր դպրոցների շատերի մէջ այս խնդրի վերաբերութիւնով լիակատար կամայականութիւն է տիրում. Ուսուցիչը մտնելով դասատուն, ինքն էլ չգիտէ թէ ի՞նչ բանից սկսէ. ինչ որ միտքն է գալիս այն րոպէին, նա խօսում է նորա վերայ. Շատ տեղեր էլ ցուցակներ կան, բայց դոքա ձևի համար են միայն. ուսուցիչն ամենևին չի հետևում ցուցակի պահանջներին. Աւելի ճիշտն ասենք. մեր դպրոցների դասացուցակները կազմւած են ըստ մեծի մասին աւելի ուսուցիչների պիտոյքներին համապատասխան, քան թէ մանկավարժական պահանջներին. Այդ ցուցակների մէջ պէտք է տեղաւորւած լինէին, նախ՝ դժուարագոյն առարկաները, ապա դոցա հետևէին հետզհետէ դիւրինները. որովհետև աշակերտների մտաւոր ուժերը աւելի թարմ լինելով դասերի սկզբում, պէտք նրանց հաղորդէինք դժուարութիւն ունեցող առարկաները, բայց հետզհետէ մտքերը յոգնելով՝ հարկաւոր էր դոցա աշխատութիւնն էլ թեթևացնել տալով նրանց աւելի դիւրին ու թեթև պարապմունքներ.

Հարկաւոր է նոյնպէս ուսուցիչների սենեակում ունենալ մի մատեան, որի մէջ դասերից ուշանալը նշանակէին, որպէս զի երևար նոցա կանոնաւոր կամ անկանոն երթևեկութիւնը. Նա և իւրաքանչիւր դասատան մէջ պէտք է լինէին մի մի մատեան, որոց մէջ գրւէին աշակերտների թէ բացակայութիւնները և թէ այն թւանշանները, որք իբրև չափ նոցա յառաջադիմութեան, նշանակւում են դասերից յետոյ. Այս ևս պէտք է յիշել, որ բացակայութիւնը ամենայն օր պէտք է նշանակել. յառաջադիմութեան նշանները կարող են օրական, շաբաթական, ամսական կամ մինչև անգամ քառորդ տարւոյ համար նշանակւիլ. Մեր կարծիքով դպրոցների ստորին աստիճաններում լաւ էր նշանակել քառորդ տարւոյ յառաջադիմութեան թւանշաններ. իսկ աւելի վերին աստիճաններում կարող էր լինիլ շաբաթական թւանշան, մինչև անգամ օրական և առարկայական ևս. Թւանշանները փոքրիկ երեխաների համար չունին ոչ ինչ նշանակութիւն, բայց մեծերի համար նոքա ունին նշանակութիւն այն դէպքերում միայն, երբ այդ թւանշաններից կախւած լինի նոցա ապագայ կոչումն.

Այն դպրոցներում, ուր որ քանի մի ուսուցիչներ պաշտօն են կատարում և դոցա պաշտօնակատարութեան վերայ հսկող կայ, հարկաւոր է ունենալ իւրաքանչիւր դասատան մէջ մի մատեան, որի մէջ իւրաքանչիւր ուսուցիչ նշանակէր քանի մի նախադասութեամբ իւր աւանդած դասի բովանդակութիւնը, որից հեշտ լինէր իմանալ նորա աւանդած առարկայի ընթացքն ու ծաւալը.

Այժմեան տարրական դպրոցի էութիւնը պահանջում է անշուշտ մի մանկավարժաբար մշակւած ուսուցման նախագիծ. Իւրաքանչիւր ուսուցիչ

պարտաւոր է ծանօթանալ, կամ թէ ամենք հաշիւ տալ իրան՝ թէ որքան ժամանակ ու միջոց ունի իւր գործը յառաջադէմ կացուցանելու. Համար՝ ծանօթանալ այդ ժամանակի ամբողջութեան հետ, նշանակում է լինել դպրոցի մէջ մի նախատես անձ, որ չի կամենում ի զուր ժամանակ կորցնել այս կամ այն գործի բաների վերայ, ով որ ճիշտ չէ իւր գործունէութեան մէջ, նա եղել է և կը լինի միշտ ապարդիւն և անյաջողակ իւր գործի վերջում, ուրիշ խօսքով նորա գործունէութեան վերջաւորութիւնը անյաջողութիւնն է միայն. Այս պատճառաւ ուսուցչի է մնում նախընթաց տարենոյ, որի գործն է որոշել աւանդելի նիւթերի ծաւալը ու պարզել դասաւանդութեան ընթացքն ու բնաւորութիւնը. Այսպէս ուրեմն այն ուսուցիչը, որ կամենում է ապահովել իւր յառաջադիմութիւնը, նախ քան ուսման սկսելը, պէտք է նախապէս գիտենայ իւր աւանդելի առարկայի ծաւալը և նորա աւանդման ընթացքն ու բնաւորութիւնը, որպէս զի աննպատակ չը կորցնէ իւր ժամանակը.

Կարծիք չկայ որ կանխորոշ նախագծով և դասաւանդութիւնը չէր հասնելու իւր նպատակին, եթէ բաւարարիչ կերպով ուսման պարագաներ չըգտնուէին թէ աշակերտի և թէ ուսուցչի ձեռում. Ինչպէս որ զինուորին պէտք զէնք պատերազմի դաշտը դուրս գալու համար, նոյնպէս էլ աշակերտներին և ուսուցիչներին հարկաւոր են դասական պարագաներ կամ գործիքներ.

Ամենայն զօրանոց ստիպուած է ունենալ իւր մօտ կարևոր եղած զինարանը. այսպէս էլ ամենայն դպրոց պէտք է իւր զինարանը ունենայ, — Ինվենտարն և մեբելներն. Վերջապէս եթէ զինուորական վարչութեան սեպուհ պարտականութիւնն է նախաքննել իւր զէնքերի պիտանաւոր և անպիտան լինելը, հարկաւոր եղած պատրաստութիւնը տեսնել և այս ուղարկել գործարարութեան, այս դպրոցական վարչութեան սեպուհ պարտականութիւնն է նախապէս քննել և որոշել այն ամենը՝ ինչ որ գործածւելու է դպրոցի մէջ, վարչութիւնը պէտք է ապահովէ իւրաքանչիւր դպրոց հարկաւոր եղած պարագաներով և պիտոյքներով.

Այդ դպրոցի էական պայմաններից մէկն էլ դասերի կանոնաւոր յաճախումն է թէ աշակերտի և թէ ուսուցչի կողմից. Չնայելով՝ որ ամեն ուսուցիչ խոստովանում է այս առաջարկութեան կարևորութիւնը, բայց ինչ անես՝ որ զարմանալ անտարբերութիւնը և ծուլութիւնը ստիպում են նոցա լինել միայն Վարձկան. Այո՛, կան այնպիսի ուսուցիչներ, որք հարկից ստիպուած են ուսուցիչ դարձել, և այդ հարկից ստիպուած ուսուցիչները հազիւ թէ կարողանային կանոնաւոր կերպիւ յաճախել իրանց դասերը. Դոքա բառ մէծի մասին պատճառ են որոնում բացակայ լինել իրանց դասերից. դոքա անհամբեր սրտով սպասում են դասի վերջանալուն միայն. դոցա մտքից երբէք չէ անցնում «ամսավերջը», դոցա միակ գաղափարն այն է, որ վերջանայ ամիսը, և կարողանան առանց ուշացնելու ստանալ իրանց վարձը. Այդ չնչին վարձատրութիւնը որ դոքա ստանում են, այդ իսկ է միայն դոցա իղձը

Դասատան մէջ գտնուած ժամանակ կարծում են թէ արգելարանի մէջ են և դասատնից դուրս գալը որչափ շուտ այնքան ուրախալի է դոցա համար. Այդ զգացմունքը իսկոյն զգում են դոցա աշակերտները և նոքա էլ հետևում են իրանց ուսուցչի օրինակին. որքան կարդում են ուսուցչի դէմքի վերայ նորա մտքի փաղանքը. այն է.— ամէն աշխատասիրութիւնը։

Այսպիսով փոքրիկ ուսուցիչները դառնում են կատարեալ օրինակ իրանց աշակերտներին.

Այս յօդուածը վերջացնելուց առաջ, մի հարևանցի ակնարկ ձգենք նաև հարցաքննութիւնների վերայ. Հարցաքննութիւնը հետևեալ պահանջները լցուցանելու համար են.— 1. որոշելու այն արդիւնքները, որոնք դպրոցը տուել է իր սաներին. Այդպիսի հարցաքննութեանց ժամանակ աւելի բնական է ուշադրութիւն դարձնել աշակերտի ընդհանուր զարգացման վերայ. (որովհետև այդ դպրոցներն էլ հանրակրթական դպրոցներ են) քան թէ տեղեկութիւնների քանակութեան վերայ, որ ձեռք է բերած նոյն յիշողութեամբ և միանգամայն անմարսելի ու անմշակ կուտակուած են նորա մտքի մէջ. Յայտնի է՝ որ տեղեկութիւնները շուտով թռչում անհետանում են աշակերտի մտքից. այն ինչ ընդհանուր զարգացման հետքերը կայուն են աշակերտի ամբողջ ինքնակրթութեան հոգւը. Ուստի ընդհանուր զարգացումն քննել պէտք է հարցաքննութեան ժամանակ.

2 րդ Հարցաքննութիւնները՝ ենթադրելով որ հրապարակական են, ծանօթացնում են մեր մեծամասնութեան առաջ, ուսուցիչների հմտութիւնները և աշակերտների առաջադիմութեանց և անդրութեանց հետ.

3 րդ Հարցաքննութիւնները՝ եթէ մանկավարժական հայեացքով են լինում, կարող են մի կողմից դպրոցի և ընտանիքի դպրոցը հասարակաց համակրութիւնը, միւս կողմից ամէն աշակերտներին փառահաւութիւն, նոցա մէջ ամփոփել ցրուած մտքերը, տարվայ ընթացքում սուած նիւթերը ամբողջացնել և ընդհանրապէս կազմ ու պատրաստ պահել նոցա հրապարակ դուրս գալու բարոյական լինել նոցա համար. Աւելորդ չենք համարում նկատել, որ հարցաքննութիւնը պէտք է լինի հրապարակական, անաչառ, բնական, շինծու ձեւական, անփոփ և որքան կարելի է, խորախուսիչ.

Հարցաքննութիւններից յառաջ յառաջարկած աշակերտներին զանազան տեղերում տրւում են պրոգրամներ, դիմումնական թղթեր և հրապարակական շնորհակալութիւններ. Մեր կարծիքով, բնաւ չպէտք է լինէին սոյնական դպրոցներում այդպիսի պարգևները և կամ թէ միմիայն առաջադէմ աշակերտներին պէտք է տուէին, այն էլ մեծ նախապատւութեամբ. որպէս զի մի կողմից սորցողները չմեծամտէին և միւս կողմից էլ քասուցողները չյուսահատւէին.

Ցանկալի է որ սովորութիւն դառնայ՝ որ ամենայն հարցաքննութիւններից յետոյ ուսուցիչները և աշակերտները միասին մի քանի զբօսանք և կրթական ճանապարհորդութիւններ անէին նպատակաւորեալ տեղերում.

Ա. Խ.